# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.03.2019թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/27**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ «Ագրոատոմ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Մ. Մկոյան (լիազորագիր տրված՝ 28.02.2019թ.)

Երևանի քաղաքապետարանի լիզորված ներակայացուցիչ՝

Լ. Ղավալյան (լիազորագիր տրված՝ 28.02.2019թ.)

Քննելով Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ծառերի էտման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում «Ագրոատոմ» ՍՊԸ-ի կողմից 25.02.2019թ. ներկայացված և 25.02.2019թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/27 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

## 1. «Ագրոատոմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ագրոատոմ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 25.02.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«31.01.2019թ-ին պատվիրատուի գնահատող հանձնաժողովի կողմից հաստատվել և հրապարակվել է թիվ ԵՔ-ԳՀԾՁԲ-19/20 ծածկագրով գնանշման հարցման հրավերի տեքստը:

Նշած ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցության հայտ են ներկայացրել թվով երեք կազմակերպություն՝ «Ագրոատոմ» ՍՊԸ-ն, «ՆորԲարեկարգում» ՓԲԸ-ն և «Զորաշեն» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովի 08.02.2019թ-ին N 2 արձանագրության 3.1 կետի համաձայն 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ամենացածր գնային առաջարկը ներկայացրել է «Ագրոատոմ» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության 4.2 կետի համաձայն՝ բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատվել են բավարար:

Նույն արձանագրության 5-րդ կետով հանձնաժողովը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով, որոշել է կասեցնել նիստը և օրենքով սահմանված կարգով հրավիրել գնային առաջարկներ կայացրած մասնակիցներին գների նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի էր ունենալու 12.02.2019թ-ին ժամը 11:00-ին:

11.02.2019թ-ին գնահատող հանձնաժողովի N 3 արձանագրությամբ բանակցությունների օրը տեղափոխվել է 13.02.2019թ.-ին:

Նշված օրը «Ագրոատոմ» ՍՊԸ-ն ներկայացել է և ներկայացրել է հատուկ կարծիք, որով հայտնել է, որ բանակցությունների անցկացումն անօրինական է:

20.02.2019թ-ին գնահատող հանձնաժողովը թիվ 17/2936ել գրությամբ հայտնել է, որ գնահատող հանձնաժողովի գործողություններն իրավաչափ են, քանի որ ընթացակարգը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետով և չնայած N 2 արձանագրության մեջ նշված չէ, սակայն հանձնաժողովը գործել է Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով, ինչի մասին նշված է ծանուցման մեջ:

Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովի գործողությունները սուբյեկտիվ են և ոչ իրավաչափ հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդողվեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

«Նորմատիվ իրավական ակտերի մասի» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի տառացի մեկնաբանությունից հստակ երևում է, որ օրենսդիրը գնման գործընթացի շրջանակներում պատվիրատուին հնարավորություն է ընձեռում առանց ֆինանսական միջոցների նախատեսման համապատասխան ընթացակարգի արդյունքում կնքել պայմանագիր՝ պայմանով, որ եթե պայմանագիրը կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում

պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չնախատեսվեն, ապա պայմանագիրը կլուծվի:

Սույն ընթացակարգի փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ 1-ին և 2-րդ չափաբաժինների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսված են, ինչը հաստատվում է պատվիրատուի գնումների պլանի ուսումնասիրությամբ:

Հետևաբար սույն ընթացակարգի շրջանակներում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիմքով պայմանագրի կնքումն անհնար է:

Անդրադառնալով գնահատող հանձնաժողովի 08.02.2019թ-ին N 2 արձանագրության նիստը կասեցնելու իրավական հիմքին՝ Ընկերությունը նշել է, որ որպես իրավական հիմք արձանագրության 5-րդ կետում նշված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համաձայն որի՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ.

2) սույն օրենքով նախատեսված այլ դեպքերի:

Ընկերությունը նշել է, որ վերը նշված իրավական նորմի տառացի մեկնաբանությունից երևում է, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով արգելում է գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցությունները՝ սահմանելով բացառիկ դեպքեր, որոնցից թեկուզ մեկի առկայության պայմաններում նոր հնարավոր է իրականացնել բանակցություններ: Բացառիկ դեպքերը սպառիչ թվարկված են և տվյալ

դեպքում դրանք իսպառ բացակայում են, հետևաբար բանակցությունների հրավիրելը և դրանք անցկացնելը չեն բխում «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներից և ոտնահարում են «Ագրոատոմ» ՍՊԸ-ի ՀՀ սահմանադրությամբ և օրենքով պաշտպանվող իրավունքները:

Ընկերությունը նշել է, որ բացառությունների մեջ նշված չէ նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիմքով ընթացակարգ հայտարարելու դեպքում բանակցություններ անցկացնելու դեպք: Դրանով է պայմանավորված գնահատող հանձնաժողովի հաջորդ մանյովրը, որով վերջինս փորձում է արդարացնել իր ոչ իրավաչափ վարքագիծը, այն է՝ 20.02.2019թ-ին գնահատող հանձնաժողովը թիվ 17/2936ել գրությամբ նշում է, որ Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է մասնակիցների հետ բանակցություններ վարելու իրավասությունը և արձանագրությունում չնշված ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի հանգամանքը չի կարող դիտվել որպես գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողություն....:

Ընկերությունը նշել է, որ գնահատող հանձնաժողովն ակամա ընդունում է մի չափազանց կարևոր հանգամանք, որ N 2 արձանագրության մեջ նիստը կասեցնելու իրավական հիմք չի նշել Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, այլ այն ներառել է ծանուցման մեջ:

Ընկերությունը նշել է, որ ծանուցումը որևէ իրավական հետևանք չի կարող առաջացնել քաղաքացիական իրավունքի սուբյեկտների համար, ավելին այն բողոքարկման ենթակա չէ:

Ընկերությունը գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրել է բանակցությունների արդյունքում ձևավորված գնային առաջարկների վրա, որոնք ըստ Ընկերության շատ չնչին են տարբերվում «Ագրոատոմ» ՍՊԸ-ի տրված գներից:

Ընկերությունը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է ղեկավարվելով Օրենքի 46-ից 48-րդև 50-րդ հոդվածների դրույթներով՝

1. պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին փոփոխել 08.02.2019թ. թիվ 2 արձանագրության 5-րդ կետը և «Ագրոատոմ» ՍՊԸ-ին «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/20» ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

2. պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին ընդունել 13.02.2019թ. թիվ 4 արձանագրության 1-ին և 2-րդ կետերն ամբողջությամբ վերացնելու վերաբերյալ որոշում:

3. պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին փոփոխել 13.02.2019թ. թիվ 4 արձանագրության 3.1 կետը և առաջին տեղ զբաղեցրած «Ագրոատոմ» ՍՊԸ-ի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ՊԵԿ:

«Ագրոատոմ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.03.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

**2.Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.**

Երևանի քաղաքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.03.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/20» ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն: Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ գնահատող հանձնաժողովի արձանագրությամբ նշված Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի դրույթը սահմանում է մասնակիցների հետ բանակցություն վարելու իրավասությունը և գնահատող հանձնաժողովի արձանագրությունում չնշված ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի հանգամանքը չի կարող դիտվել, որպես գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողություն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառմամբ գնման ընթացակարգերի շրջանակներում գների նվազեցման շուրջ բանակցություններ վարելը ամրագրված է Կարգի վերը նշված կետում, որպես իմպերատիվ պահանջ, որն էլ նշվել է գների նվազեցման նպատակով միաժամանակյա բանակցություններ վարելու ծանուցման մեջ:

**3. ԳԲՔԱ-ԱՄ-2019/27 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

ԳԲՔԱ-ԱՄ-2019/27 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ծառերի էտման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Նոր Բարեկարգում» ՓԲԸ-ն, «Զորաշեն» ՍՊԸ-ն և «Ագրոատոմ» ՍՊԸ-ն:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.02.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցների կողմից ներկայացվել են հատկյալ գնային առաջարկները՝

| հ/հ. | Նախահաշվային գներ | «Նոր Բարեկարգում» ՓԲԸ | | Ագրոատոմ» ՍՊԸ | | «Զորաշեն» ՍՊԸ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ-ն | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ-ն | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ-ն |
| 1 | 24 996 476 | 18 625 000 | 22 350 000 | 17 377 000 | 17 377 000 | 18 973 000 | 22 767 600 |
| 2 | 22 951 620 | 16 500 000 | 19 800 000 | 15 900 000 | 15 900 000 | 16 655 000 | 19 986 000 |

4. Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, որոշել է կասեցնել նիստը և օրենքով սահմանված կարգով հրավիրել գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներին գների նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի էր ունենալու 12.02.2019թ. ժամը 11:00-ին:

5. Ընթացկարգի գնահատող հանձնաժողովի 11.02.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ բանակցությունների օրը տեղափոխվել է 13.02.2019թ.:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 13.02.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ Ընթացակարգի բանակցություններին

ներկայացել են՝ «Նոր Բարեկարգում» ՓԲԸ-ն, «Զորաշեն» ՍՊԸ-ն և «Ագրոատոմ» ՍՊԸ-ն, սակայն նիստին ներկայացած «Ագրոատոմ» ՍՊԸ-ն հայտնել է իր հատուկ կարծիքը և հրաժարվել է մասնակցել գների նվազեցման միաժամանակյա բանակցություններին՝ ներկայացնելով առարկությունների մասին հատուկ կարծիք, ուստի գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունները վարվել են «Զորաշեն» ՍՊԸ-ի և «Նոր Բարեկարգում» ՓԲԸ-ի միջև, որոնք նվազեցրել են իրենց հայտով առաջարկած գները:

7. Նույն արձանագրության 2-րդ կետով կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Նոր Բարեկարգում» ՓԲԸ-ին, 2-րդ չափաբաժնի մասով՝ «Զորաշեն» ՍՊԸ-ին:

**4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով «Ագրոատոմ» ՍՊԸ-ի 25.02.2019թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ԳԲՔԱ-ԱՄ-2019/27 բողոքի քննության շրջանակներում Երևանի քաղաքապետարանի կողմից հայտնած դիրքորոշումը, «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հրացման հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս հրավերով սահմանված դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի, հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար

նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ ***Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում***, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Օրենքի 38-րդ հոդվածի համաձայն՝ Գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ.

2) սույն օրենքով նախատեսված այլ դեպքերի:

Այսպիսով, Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ծառերի էտման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցում:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Նոր Բարեկարգում» ՓԲԸ-ն, «Զորաշեն» ՍՊԸ-ն և «Ագրոատոմ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.02.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցների կողմից ներկայացվել են հատկյալ գնային առաջարկները՝

| հ/հ. | Նախահաշվային գներ | «Նոր Բարեկարգում» ՓԲԸ | | Ագրոատոմ» ՍՊԸ | | «Զորաշեն» ՍՊԸ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ-ն | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ-ն | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ-ն |
| 1 | 24 996 476 | 18 625 000 | 22 350 000 | 17 377 000 | 17 377 000 | 18 973 000 | 22 767 600 |
| 2 | 22 951 620 | 16 500 000 | 19 800 000 | 15 900 000 | 15 900 000 | 16 655 000 | 19 986 000 |

Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, որոշել է կասեցնել նիստը և օրենքով սահմանված կարգով հրավիրել գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներին գների նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի էր ունենալու 12.02.2019թ. ժամը 11:00-ին:

Ընթացկարգի գնահատող հանձնաժողովի 11.02.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ բանակցությունների օրը տեղափոխվել է 13.02.2019թ.:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 13.02.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ Ընթացակարգի բանակցություններին ներկայացել են՝ «Նոր Բարեկարգում» ՓԲԸ-ն, «Զորաշեն» ՍՊԸ-ն և «Ագրոատոմ» ՍՊԸ-ն, սակայն նիստին ներկայացած «Ագրոատոմ» ՍՊԸ-ն հայտնել է իր հատուկ կարծիքը և հրաժարվել է մասնակցել գների նվազեցման միաժամանակյա բանակցություններին՝

ներկայացնելով առարկությունների մասին հատուկ կարծիք, ուստի գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունները վարվել են «Զորաշեն» ՍՊԸ-ի և «Նոր Բարեկարգում» ՓԲԸ-ի միջև, որոնք նվազեցրել են իրենց հայտով առաջարկած գները:

Նույն արձանագրության 2-րդ կետով կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Նոր Բարեկարգում» ՓԲԸ-ին, 2-րդ չափաբաժնի մասով՝ «Զորաշեն» ՍՊԸ-ին:

Ընկերության ներկայացուցիչը ԳԲՔԱ-ԱՄ-2019/27 բողոքի քննության նպատակով հրավիրված նիստի ժամանակ հայտնել է, որ «Ագրոատոմ» ՍՊԸ-ն չի մասնակցել Պատվիրատուի կողմից «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/20» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում հրավիրված բանակցություններին և ներկայացրել է հատուկ կարծիք, որով մասնավորապես հայտնել է, որ բանակցություններն անօրինական են և հակասում են Օրենքի 38-րդ հոդվածով սահմանված պահանջներին:

Օրենքի 38-րդ հոդվաի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև ***<u>բանակցություններն արգելվում են, բացառությամբ</u>***՝

***1) երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ.***

2) սույն օրենքով նախատեսված այլ դեպքերի:

Այսպիսով, Օրենքը հստակ սահմանել է, որ արգելվում է գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցությունները՝ սահմանելով բացառիկ դեպքեր, որոնք սպառիչ թվարկված են Օրենքի վերը նշված հոդվածով, մինչդեռ ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.02.2019թ. ժամը 10:00-ի

նիստի թիվ 2 արձանագրությամբ բանակցություններ հրավիրելու իրավական հիմքը, այն է՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների համար սահմանված նախահաշվային գները, «Նոր Բարեկարգում» ՓԲԸ-ի, «Զորաշեն» ՍՊԸ-ի և «Ագրոատոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները և վերջիններիս հայտերի գնահատման արդյունքները, արձանագրում եմ, որ բացակայում է Օրենքի 38-րդ հոդվածով բանակցություններ հրավիրելու իրավական հիմքը, հետևաբար գտնում եմ, որ նման պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մասանակիցներին հրավիրելով գների նվազեցման շուրջ բանակցությունների, այն դեպքում երբ բանակցությունները չեն բխում Օրենքի վերը նշված հոդվածի պահանջներից, գործել է ոչ իրավաչափ:

Վերը նշված փաստով պայմանավորված, գտնում եմ, որ Ընկերության բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերվում է բողոքաբերի այն դիտարկմանը, որ սույն ընթացակարգի փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ 1-ին և 2-րդ չափաբաժինների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսված են, ինչը հաստատվում է պատվիրատուի գնումների պլանի ուսումնասիրությամբ, ապա սույն մասով արձանագրում, եմ, որ Պատվիրատուն բողոքի քննության նպատակով հրավիրված նիտի ընթացքում հայտնել է, որ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում Պատվիրատուի կողմից համապատասխան լրացում է կատարվել:

Այսպիսով, Կարգի 18-րդ կետով սահմանվումն է, որ ***Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում:***

Ինչ վերաբերվում է Պատվիրատուի այն դիտարկմանը, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառմամբ գնման ընթացակարգերի շրջանակներում գների նվազեցման շուրջ բանակցություններ վարելը ամրագրված է ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-

Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով, որպես իմպերատիվ պահանջ, որն էլ նշվել է գների նվազեցման նպատակով միաժամանակյա բանակցություններ վարելու ծանուցման մեջ, ապա սույն մասով արձանագրում եմ հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասի» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝*** հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, ***այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից,*** իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ինչ վերաբերում է «Ագրոատոմ» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված հետևյալ պահանջին, այն է՝ պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին փոփոխել 08.02.2019թ. թիվ 2 արձանագրության 5-րդ կետը և «Ագրոատոմ» ՍՊԸ-ին «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/20» ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, ապա սույն մասով արձանագրում եմ հետևյալը.

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս հրավերով սահմանած դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի, հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովն է որոշում գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին):

Հաշվի առնելով վերը նշված հոդվածների դրույթները, գտնում եմ, որ բողոքի պահանջը սույն մասով ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

# Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ագրոատոմ» ՍՊԸ-ի կողմից 25.02.2019թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի, մասնավորապես՝

1. պարտավորեցնել «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/20» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 13.02.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության 1-ին և 2-րդ կետերով կայացված որոշումները:

2. Բողոքի պահանջը՝ «Ագրոատոմ» ՍՊԸ-ին «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/20» ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ, մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**